ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Գեղարքունիքի մարզի Ն. Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/6 Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մարտի 6-ին կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/6 Հ պայմանագրում 2018 թվականի մարտի 15-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Քանի որ հեղինակային հսկողության ծառայությունը կապված է շինարարության ընթացքի հետ, նպատակահարմար է յուրաքանչյուր տարի շինարարական ծրագրի համար գումար հատկացնելու դեպքում կնքել նոր պայմանագիր:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի 4.1 կետի առաջին պարբերությունը շարադրվել է նոր խմբագրությամբ:
Փոփոխության հիմնավորում	2018 թվականի մարտի 6-ին կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/6 Հ պայմանագրի 7.5 կետը:

Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

06.03.2018 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/6 Հ գնման պայմանագրի

ք. Երևան 15 մարտի 2018թ.

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Գողթն>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Հովակիմյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Ն. Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 06.03.2018 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ՄԱԾՁԲ-18/6 Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 4.1 կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Սույն պայմանագրի Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 294 500 (երկու հարյուր իննսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011019164 ՀՎՀՀ 02565827	<<Գողթն>> ՍՊԸ ք. Երևան, Վ. Վաղարշյան 14-4 <<Ամերիաբանկ>> ՓԲԸ Հ/Հ 1570023024930100 ՀՎՀՀ 00010182
Աշխատակազմի ղեկավար՝ _____ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝ _____ Ա. Հովակիմյան (ստորագրություն) Կ.Տ.